

### Տ Ա Ր Ե Վ Ե Ր Ջ Ի Հ Ա Ն Դ Ի Մ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Երուսաղէմի Հայ Գատրիարքուժեան ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տարեկերթի Հանդէսը տեղի ունեցաւ Շարաթ, 27 Յունիս 1970, երեկոյեան ժամը 7-ին, Կիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանի: Հանդէսը, պատշաճ կարգադրութեամբ մը, նուիրուած էր Ս. Աթոռի Երջնկ. Գատրիարք Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանի յիշատակին, վախճանման երեսնամեակին առիթով:

Սրահը ժամանակէն առաջ լեցուած էր արգէն ունկնդիրներով ևւ ժառանգաւորաց Վարժարանի, ինչպէս նաեւ Տատուրեան սանիքով: Ժամը ճիշդ 7-ին սրահ մուտք գործեց Ամեն. Գատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի, միաբան Հայրերու եւ աւագ սարկաւազներու, եւ, ժառանգաւորաց Վարժարանի «Սիրտ ի Սիրտ» քայլերգէն ետք գործադրուեցաւ զեղեցիկ յայտագիր մը:

Գերշ. Տ. Շահէ Եպս. կատարեց Հանդէսին բացումը, եւ Թարգման Հանդիսացաւ եւ ըստազիտական այն խորունկ զգացումին՝ որ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի սաներունն էր, Հանդէպ Թորգոմ Գորք. Գուշակեանի մեծ վաստակին: Ճըշմարտապէս, Երջնկ. Սրբազանը Հայրը եղած էր Դուրեան Գատրիարքով վերածաղկած Երուսաղէմի Դպրեմանքին:

Հինգերորդ Դասարանի սան ուրարակիր Ենովջ Աճէմեան ընթերցումը կատարեց Թորգոմ Գատրիարքի «Նիրմեան Հայրիկ» երկի վերջարանին: Սիւլլի Բրիւտոմի «Սիրտըս է Բարի» քերթուածին Թարգմանութիւնը արտասանեց Համարձուց Գալեան, մինչ Բարշ. Օննիկ Ա. Սարկաւազ արտասանեց Թորգոմ Գատրիարքի քարոզներէն մին: «Ազօթը» քերթուածի արտասանութենէն (սան

Կաշիկ Գալլաճեան), սաներու կողմէ երգուած «Ոռչը» խմբերգէն եւ Բարշ. Մանուկ Ա. Սարկաւազի կողմէ կատարուած «Քարոզի ընթերցումէն ետք, Բարշ. Վարդան Ա. Սարկաւազ ներկայացուց Թորգոմ Գորք. Գուշակեանի կենսագրութիւնը: Բարշ. Սարգիս Ա. Սարկաւազ խօսեցաւ «Եկեղեցակաւոր Թորգոմ Գորք. Գուշակեանի մէջ» նիւթին շուրջ, մինչ Բարշ. Պողոս Ա. Սարկաւազ վեր առաւ դրագէտ Պարտիարքը: Երեք սարկաւազներն ալ մեծ հոգածութեամբ եւ սիրով պատրաստած էին իրենց խօսքերը, որոնք ունկնդրուեցան խոր Հետաքրքրութեամբ: Մէջընդմէջ կատարուեցան ընթերցումներ, որոնք վկայութիւններ էին Հանդուցեալ Գատրիարքին մասին Տիրգրան Կամսարականի, Նիկոլ Աղբալեանի եւ Ն. Ա. Ղոնցի նման Հեղինակաւոր անձնաւորութիւններու կողմէ գրի առնուած:

Հանդէսի երկրորդ մասին, Վերատեսուչ Սրբազանը կարդաց ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի միամեալ տեղեկագիրը եւ Թուեց այն ըստ իրագործումները որոնք արգիւնք էին գործադրութեան դրուած ուսումնական նոր ծրագրին եւ սարուած մասնաւոր ճիշդին: Ապա, Գերշ. Սըրբազանը անդրադարձաւ Բարեբար Մեծայարգ Տատուր Տատուրեանի ազգանունէր այն ձեռնարկին, որով իր շնորհիւ եւ այլ բարեբար ազգայիններու միջոցաւ կարեւր կեղծ էր Հարիւրի մօտեցող Հայ պատանիներ Երուսաղէմ բերել Թուրքիոյ դաւաճներէն եւ անոնց առջեւ բանալ Հայ Դպրոցի դռները: Սրբազան Հայրը գովեստով յիշեց Հիւսիսային Ամերիկայի մէջ կազմուած «Երուսաղէմի Հայ Գատրիարքութեան Բարեկամներ» ընկերակցութիւնը, որ իր օժանդակ «Մաներու Յանձնախումբ»ին Հեա նիւթական Բէրարոյական անգնահատելի նեցուկ կը Հանդիսանար Երուսաղէմի Ս. Աթոռին: Սրբա-

զանք կարգաց ցանկը այն բարերար անձնա-  
ւորութիւններուն եւ կազմակերպութիւննե-  
րուն, որոնք ժառանգաւորացէն ներս սաներ  
կամ սան մը որդեգրած էին:

Ապա, Ամեն. Պատրիարք Սրբազանը  
բաժնեց վկայականներ ժառանգաւորաց  
Վարժարանի Հինգ շրջանաւարտներուն: Ու-  
սումնական տարեշրջանին իրենց ժառանգու-  
թեամբ աչքի ինկած աշակերտներու յանձ-  
նուեցան իրենց մրցանակ-նուէրները եւ ա-

պա, Պատրիարք Ս. Հայրը խօսք առնելով,  
վերլուծեց երջանկայիշատակ Քորդոմ Պատ-  
րիարք Գուշակեանի Հմայքին ու մեծութեան  
զտղանխըը:

Պատրիարք Ս. Հօր «Պահպանիչ»ով վերջ  
դտաւ շատ գեղեցիկ եւ ոգեւնչող այս հան-  
դէսը, որ անդամ մը եւս կրօնական տոպա-  
րէզ բնորոշելու եկած աշակերտներուն ներ-  
շնչեց նուիրումի, անսակարկ զոհարման  
եւ անդուշ աշխատանքի եռանդը:

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ**  
**Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ**

**ԳԱՇՏԱՀԱՆԻՍ**

Տեղի ունեցաւ Կիրակի, 10 Մայիս, կէ-  
սօրէ ետք ժամը 4ին, ժառանգաւորաց Վար-  
ժարանի մարդադաշտին վրայ, ի ներկայու-  
թեան ստուարաթիւ ժողովուրդի:

Հանդէսը սկսաւ մարդիկներու տողանց-  
քով եւ Թարգմանչաց «Որք զարդարեցին»  
շարականի երգեցողութեամբ: Ապա, երկու  
ժամերու տեւողութեամբ, երկեսո աշակեր-  
տութիւնը, բաժնուած երկու խումբերու,  
ցուցադրեց արդիւնքը ինը ամիսներու իր  
մարդական դաստիարակութեան: Վազք,

ոստում, զբօշարչաւ, պարանաձգութիւն եւ  
նման խողեր կը լեցնէին յայտադիրը: Ար-  
դիւնքը զսահցուցիչ էր, ինչ որ լաւազոյնս  
կը փաստէր զոյգ մարդիկներուն՝ Պր. Մի-  
սսք Յակոբեանի եւ Տիգլին Աննա Սիմոնեանի  
նուիրուածութիւնը աշակերտութեան մարմ-  
նակրթանքին:

Տեսուչ Հոգչ. Տ. Կիրեղ Մ. Վարդապետ  
խողերու աւարտին բաժակներով ու մէտալ-  
ներով վարձատրեց յաջող մարդիկները:

**ԱՄՍՎԵՐՁԻ ՀԱՆԻՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ԲԱԺՆԻՆ**

Կիրակի, 7 Յունիս, կէսօրէ ետք ժամը  
4ին, Հայ Երիտասարդաց Միութեան ա-  
կումբին մէջ կատարուեցաւ Ս. Թ. Մանկա-  
պարտէզի հանդէսը, ի ներկայութեան հը-  
րաւիրեալներու եւ ծնողներու բազմութեան:

Մանկապարտէզի, ինչպէս նաեւ Նախա-  
կրթարանի Ա. Դասարանի փոքրիկները ծա-  
փեր խլեցին հանդիսականներէն, իրենց  
այնքան յաջող պարերուն, արամախօսու-  
թիւններուն եւ հայերէն, անգլերէն եւ արա-

բերէն լեզուով կատարած արտասանութիւն-  
ներուն համար:

Տեսուչ Հոգչ. Տ. Կիրեղ Մ. Վարդապետ  
հանդէսի աւարտին վնահատանքով արտա-  
յայտուեցաւ Մանկապարտէզի ուսուցչուհի-  
ներուն եւ մասնաւորաբար կէս դարու վա-  
տակ ունեցող Օր. Տիգրանուհի Նալպանտ-  
եանի մասին, եւ ընթացաւարտ 19 փոքրիկ-  
ներուն բաժնեց Մանկապարտէզի վկայա-  
կանները:

**ԱՄՍՎԵՐՁԻ ՀԱՆԻՍ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ**

Կիրակի, 14 Յունիս, երեկոյան ժամը  
6-30ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի սը-

բահին մէջ տեղի ունեցաւ Երկրորդական  
Բաժնի ամսվերջի հանդէսը, բաղկացած